

Հայտարարություն
ՀՀ Սյունիքի մարզպետարանը հրապարակում է սույն հայտարարությունը
փորձագետ ներգրավելու վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզպետարանը (այսուհետ՝ Մարզպետարան) ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գործընթացի իրականացման աշխատանքներում փորձագետ ներգրավելու մասին:

Աշխատանքների համառոտ նկարագիրը.

Մարզում տեղեկատվական հոսքերի, պաշտոնական իրադարձությունների լուսաբանում, հանրության հետ կապերի ապահովում:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ Պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով:

Փորձագետի պարտականությունները՝ իրականացնում է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բնագավառում պահանջվող աշխատանքը՝ մարզպետարանի պաշտոնական կայքում տեղեկատվության, փաստաթղթերի, այլ անհրաժեշտ նյութերի տեղադրում, իրադարձությունների լուսաբանում, մամուլի հաղորդագրությունների պատրաստում, մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկատվության հավաքում, հանրային կարծիքի ուսումնասիրություն, լրատվական դաշտում (նաև սոցիալական կայքերում) մարզի մասին տեղեկատվության մոնիտորինգ:

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

- ունի բարձրագույն կրթություն՝ «լրագրություն» կամ «հանրային կապեր» մասնագիտությամբ (առնվազն բակալավրի աստիճան),
- ունի լրատվության կամ հանրային կապերի ոլորտում աշխատանքային փորձ,
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Վարձատրության չափը՝ Պայմանագրային:

Փորձագետի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը, ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փառձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք:

Ընտրությունը կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Սյունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակներով).

- գրավոր դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարան, Անձնակազմի կառավարման բաժին) կամ մարզպետարանի անձնակազմի կառավարման էլեկտրոնային փոստի միջոցով՝ syunik.anznakazm@mail.ru:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար քաղաքացիները կարող են զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետարան՝ (0285) 44275 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 19/07/2022թ.:

քաղաքացի _____ -ից
(դիմողի անունը, ազգանունը)

_____ դիմողի հասցեն

_____ Էլեկտրոնային հասցեն

_____ հեռախոսահամարը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ.
5. Այլ _____ էջ.
Առդիր՝ _____ էջ.

Դիմող՝ _____
ստորագրություն անուն, ազգանուն

« _____ » _____ 202 թ.

Նախազգուշացված եմ՝ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: